

Համշեներենը՝ «բացահայտ վտանգի տակ գտնվող» լեզուների շարքում



UNESCO-ի հրապարակած «Վտանգի տակ գտնվող լեզուների ասոլսար» ցույց է տալիս, որ 18 լեզու Թուրքիայում վերացման վտանգի տակ է: Համշեներենը տեղ է գտել «բացահայտ վտանգի տակ գտնվող» լեզուների շարքում:

Այս մասին տեղեկացնում է Արևմտահայոց հարցերի ու սու մնասիրության կենտրոնի թուրքերենի բաժնի ղեկավար ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆԸ, նշելով, որ ներկայումս համշենցիների ամենամեծ խնդիրը լեզվի և մշակույթի պահպանումն է, քանի որ համշենահայերենը հետզհետե անհետանում է. «Մեր կատարած ու սու մնասիրությունները ևս ցույց տվեցին, որ համշենահայերի նոր սերունդը, ցավոք, արդեն գրեթե չի կարողանում հաղորդակցվել համշենահայերենով: Դրա պատճառները մի քանիսն են. ուրբանիզացիան, գլոբալիզացիան, ինչպես նաև զուտ սուբյեկտիվ գործոնը, երբ բազում համշենահայ ծնողներ իրենց զավակների հետ միտումնավոր չեն խոսել համշենահայերեն, որպեսզի նրանք կարողանան «ավելի լավ յուրացնել պատշտոնական լեզու թուրքերենը և լավ կրթություն ու աշխատանք ունենալու հնարավորություն ունենան»:

«Լեզուն ազգային ինքնագիտակցության և ինքնության ձևավորման, թերևս, ամենաորոշիչ գործոններից մեկն է,- նշում է ԵՊՀ դոցենտ, հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչության բաժնի վարիչ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԸ:- Զբավարարվելով կրոնավորությամբ և հասկանալով լեզվի էթնոտարբերակիչ դերը՝ օսմանյան և հանրապետական Թուրքիայի իշխանությունները խիստ կարևորել են իրենց ենթակայության տակ գտնվող ժողովուրդներին թուրքախոս դարձնելը՝ ամբողջացնելով նրանց ձուլման գործընթացը»: Լուսինե Սահակյանը փաստում է սակայն, որ Արդվինի նահանգի Խովիս և Բորչկա գավառների համշենցիները կարողացել են պահպանել հայերենի՝ Համշենի բարբառի իրենց տեղական խոսվածքը և դեռ գործածում են իրենց առօրյա խոսակցականում. «Ինչպես ցույց են տալիս մեր կատարած ու սու մնասիրությունները, այսօր Խովիսի և Բորչկայի գավառների համշենցիների թիվը մոտավորապես 25-30,000 է: Սակայն երիտասարդ սերունդն արդեն մոռանում կամ չի գործածում իր տեղական խոսվածքը և առավել մեծ տեղ է տալիս թուրքերենին: Միաժամանակ նշենք, որ նրանք հայերեն տառերը չգիտեն, բացառությամբ մի քանի մտավորականների, ովքեր գիտաճանաչողական նպատակներով սովորում են մեթոդային տառերը: Շնորհիվ հայերենի Համշենի բարբառի տեղական

խոսվածքի պահպանման՝ այս շրջանների համշենցիների մի մասն ընդունում է իր հայկական ծագումը: Չնայած թուրքական քարոզչությանը, նրանք շատ լավ հասկանում են, որ իրենց խոսակցական լեզուն թուրքերեն չէ»:

Իսկ անհա Ռիզեի նահանգի համշենցիների շրջանում, թուրքագետի հավաստմամբ՝ թուրքացումն առավել խոր արմատներ է գցել. «Ռիզեի համշենցիները մոռացել են իրենց մայրենին՝ հայերենը, և խոսում են թուրքերեն: Ոմանք, թեև ընդունում են իրենց հայկական ծագումը, սակայն անմիջապես հավելում են, որ արդեն թուրքացել են: Նրանց միջավայրում շրջանառվում է այն տեսակետը, որ նրանք սերվել են թյուրքական ցեղերից»:

Լուսինե Սահակյանն ընդգծում է՝ իսլամացման քաղաքականությունը պետք է գնահատել որպես ցեղասպանության դերսևորման մի ձև, որին ենթակվեց հայության այս հատվածը բռնի կտրվելով իր արամատից ու հեռանալով իր ազգային ակունքներից և մշակույթից: